

դեռ եւս այն դառնութեանց մէջ կամք, զոր տէր Աստուած ի քաղցրութիւն փոխարկեցէ:

Արդ որք հանդիպիք սրբոյ Աւետարանի տեսութեան, Աստուած ողորմի ասացէք հոգւոյ մեղաւոր Տիրատուրիս¹⁴ նա եւ զսակաւ յիշատակարանս զժաղրողիս Արիստակէս¹⁵ երիցուս եւ ծնողաց իմոց եւ աղղատոհմիցս, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս:

¹⁴ Տիրատուր. ծանօթ մը չէ ինձ համար:

¹⁵ Արիստակէս. անծանօթ ծաղկող մըն է Աւետարանի օրինակողն ու յիշատակարան գրողը,

Յիշատակ է Ս. Աւետարանս Նարեկացի մահտեսի Եսայի, որդի Մահտեսի Մաթէոսին կենդանի հոգւոյն, որ յիշատակ գուղըն խարթալ ի դուռըն Ս. Նշան եկեղեցւոյն. ամէն: Ո ոք որ այս Ս. Աւետարանս գրաւ տայ կամ գողանայ կամ ծախէ, զպատիճն Կայենի եւ Յուդայի առցէ:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ինչպէս զընթեան նոյնութենէն կը հասկըցուի:

1960-Ի ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Սորհրդային Հայաստանը ամէն տարի իր բանաստեղծական հունձքը կու տայ. հինները կը շարունակեն նոր երկեր հրապարակ հանել. նորեր կու դան շարքերը խտացնելու համար: Իրենց մտածելակերպով, բառերով, ոճերով եւ ասութիւններով կը տարբերին արեւմտահայ գրողներէն: Իրենց ներշնչումի ենթահողը դարձեալ հայ ժողովուրդն է, հայ դիւղացին իր միամիտ պատկերներով մակերեւութային մտածութեամբ եւ պարզութեամբ:

Ընդհանրապէս աշխատանք չեն տանիր ճոխացնելու իրենց արուեստն ու բառամթերքը, կը սիրեն աչուղական քնարը եւ անոնց յատուկ բառերը, եաք, ջան, հոգիս եւն. ամէն քերթուածի մէջ գրեթէ կը հանդիպինք:

Բայց իրենց շունչը տաք է, մեր հոգէն կու դայ, մեր արեւուն գոյնն ունի, առանց արուեստի՝ սրտիդ կը խօսին զեղջուկի մը պարզութեամբ:

Պ Ա Ր Ո Յ Ր Ս Ե Ի Ա Կ

Բոլորովին նոր գրող մըն է, երիտասարդ աւելնով եւ օժտուած շնորհքով:

Նա 1959ի վերջերը հրապարակ հանեց իր Անլուի գանգալատունը, երկարաշունչ եղերերգութիւն մը, նուիրուած անմահ Կոմիտաս վարդապետի ծննդեան 90ամեակին (1869-1959): Բանաստեղծական կենսագրութիւնն է մեծ վարդապետին. բաժնուած վեց ընդհանուր դրուագներու. - Ցայգալոյսի համագանգ, Արեւագալի համագանգ, Միջօրէի համագանգ, Ծաւալուող համագանգ, Եղեռնի համագանգ, Ահագնացնող համագանգ: Այս ընդհանուր բաժանումները պիտի ունենան իրենց ենթաբաժանումները բազմաթիւ Ղօղանջներու անլուի հնչումով:

Պարոյր Սեւակի գիրքը առաջին օրէն տատամսոտ ընդունելութիւն մը գըտաւ, սակայն քանի մը շաբաթ յետոյ 5,000 օրինակները արդէն սպառած՝ անգլտանի զարձած էին:

Ինչո՞ւ Անլուի գանգալատունը գրած է վերնագիրը եւ ոչ զանդակ. զանդակատունը չէնքն է եւ ոչ զօղանջողը. թերեւս Կոմիտասի անձը զանդակատուն պատկերացուցած է եւ անոր ձայնն ու արուեստը՝ զօղանջ:

Հանդարտ երեւակայութեամբ, առանց

ճիգի եւ արուեստի մարմաջի, կը սկսի իր տաք շունչով հիւսել կենսագրականը. նախ կոչում մը Յ. Թումանեանի (ծնած 1869ին) եւ ապա թոխչը:

Անատուրի մթին խորքերում

Մէկ ուրիշ մանուկ լոյս աշխարհ եկաւ:

Մեղմաղձոտ շէտով պիտի երգէ այդ մանուկին աղքատ ծնունդը. անոր մօրմէն անմիջական որբութիւնը յուզում կը պատճառէ հեղինակին. առանց ճիշերու, մեղեդիական շունչով, ինչպէս Կոմիտաս պիտի երգէր հայ ժողովուրդին լուռ ցաւերը, կը վերակոչէ անոր մօր յիշատակը:

Բայց ինչո՞ւ դնաց Հայոց թագուհին, Մնար

Ու ծիծ տար

Իր Սողոմոնին, մեր Կոմիտասին

Նրա ճակատի

Ամպերը վանէր.

Նախ նրա ոտին,

Եւ յետոյ սրտին

Փռչերը հանէր

Մնար ու նրան մի ողջ ժողովուրդ

«Մեծ մայր» անուանէր

«Վեհամայր» կոչէր

Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա

Իր բերին տանէր

Փէշերը պաչէր

Մնար... չմնաց:

Ի՞նչ ժառանգութիւն պիտի տային խեղճ Սողոմոնին այդ աղքատ ընտանիքը - Լոկ ձայն կիլերան եւ էջմիածնի ճեմարանին մէջ թրքախօս պատանին զարձաւ Լուսաստղ մի նոր:

Պարոյր Սեւակ կ'առաջնորդէ իր ընթերցողը էջմիածնի ճեմարանը, ուր խայտաբղէտ հաւաքածուն, Լոյս է ուզում. ուսում ուսում: Կոմիտաս պիտի սորվէր հայերէն, պիտի ճանչնար Շարականները, մանրուսումը, խաղերը: Իր ձայնը հրաշալի էր, դիւթիչ, միակ հայրենի ժառանգութիւնը: Եւ ահա Արարատեան դաշտերուն մէջ պիտի գտնէր Սոնա Եարը. գեղջուկ երգերը իր սիրտը պիտի բանային նոր արեւոտ կեանքի:

Պարոյր Սեւակ ընդարձակ էջերով պիտի թափառի Կոմիտասի հետ հայ ժողովուրդին մէջ

Եւ ուրտեղ երգը

Այնտեղ էր հիմա եւ Կոմիտասը:

Հայկական կեանքը, պարերը, երգերը դարձան Արեւագալի օրերուն, տօթակէզ ամրան, ոսկեայ աշունին պիտի ներշնչեն հեղինակին ճոխանալ հայ երգի եւ դաշտերու գեղեցկութեան գովերգով: Կոմիտասի կեանքին ամէնէն բանաստեղծական տարիներն են եւ հեղինակը իրաւունք ունի ծաւալուն էջեր տալու. խառնելով բոյր եւ դոյն իր աշուղատիպ սողերուն:

Եղեռնի համագանգը պատմականն է կոտորածներուն: Հեղինակը կը փոխէ իր խանդավառ ոճը եւ կը դառնայ տխուր բաներ պատմող, մուր քսելով խարդախ եւրոպացիին երեսին, ջարդարար Թուրքը ներկայացնելով անասնական մի ժողովուրդ: Սակայն շատ մանրամասնելով ջարդերու պատմականը, կը տուժէ իր քնարական շունչը: Երկար ջատագովական մ'է հայ ստեղծագործ հոգիին եւ կործանարար Թուրքին մէջ:

Հաշիշ չեն ծխում,
Խմում են գինի:

Եւ ապարանք ու վանքեր կը կերտեն ժայռերէն:

Պիտի յիշատակէ տրամօրէն Ապրիլեան եղեռն ու Կոմիտասի եղերական աքսորը: Բուռն շէտ կու տայ իր սողերուն, երբ կ'երգէ պոլսական թաղերէն աքսոր գնացող մեր մտաւորականները. երբ կը խընդրէին վարդապետէն Երգել Կոռնիկ կամ Խնկի ծառ: Սրտադին էջեր պիտի տար հեղինակին, եթէ.

Ախ, Վարդապետ, դու՞ն է հայցում
Տիրալուկ ամբողջ մի ազգ
Քո սեւասուղ սուրբ բերանով
Տէր ողորմես

Խնդրանքին մէջ չխառնէր անյոյս հայհոյանք Աստուծոյ դէմ, երբ ամբողջ ազգը

եւ Կոմիտաս ինքնին յանուն քրիստոնէութեան եւ հայութեան կ'երթային դէպի կառափնաստ:

Նոյն շնորհով եւ աղերարչ տողերով հեղինակը կը պատկերացնէ Կոմիտասին խաղաղութեան երկար տարիները: Հաճելի դեղերումներ կը կատարէ Հայաստանի ամայի վայրերը, որոնց ցաւով կարծես դժուած ու խենթեցած էր Վարդապետը: Լաւագոյն էջերէն մէկը կը կազմէ Ղօղանջ մքաղմունի բաժանմունքը:

Ահագնացնող արձագանգը պիտի ընդգրկէ Կոմիտասի մահուան եւ թաղման տխուր էջերը: Հուսկ բոլորանուէր ձօն մը իր քերթուածին:

Եւ մեղանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչբուռը
Այս խաչբուռը քո խակ հերկի:

Կարելի է փակել այս 267 էջնոց քերթողական մատենան, առանց սրտով միանալու հեղինակին հետ թունդ հայրենասիրութեան զգացումներով:

Երիտասարդ հեղինակը հակառակ որ հեռուոր Մոսկուայի մէջ գրած է իր «Անլուելի զանգակատունը», սակայն երեւակայութեամբ, հոգիով ու սրտով աշխարհէ աշխարհ Կոմիտասի հետ «Անլուելի զանգակատան» բարձր գաղաթէն երգած է նաեւ իր մարտիրոս ցեղին նահատակութիւնն ու յարութիւնը:

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Շ Ի Ր Ա Ջ

Անտարակոյս բոլոր արեւելահայ ներկայ գրողներուն մէջ Յովհաննէս Շիրազ ամէնէն աւելի օժտուած քնարերգակ բանաստեղծն է: Նուրբ, զգայուն եւ գիտաւոր է իր քերթուածներուն մէջ: Ոչինչ նիւթ մը գիտէ ձեւաւորել, մարմին եւ հոգի տալ ու ներկայացնել, ինչպէս ծաղկավաճառ մը որ արուեստ ունի փունջեր կազմելու մէջ:

Շիրազ իր սիրած նիւթերն ունի, հեռու աղմկալից գործատուներէ, հեռու քաղաքներու ծխոյրներէ, հեռու քաղաքական բը-

նոյթ ունեցող ներքողական ճառերէ, կը մտնէ իր ներաշխարհը եւ հոն իր սրտին մէջ կը փնտռէ բնութիւնը, իր մայրը, իր անձեքանալի հայրենիքը, սէրը: Սիրոյ երգիչ է ամէնէն առաջ եւ իր սէրը գոյն ու թուրքութիւն կու տայ քերթուածներուն: Իր Եւր ներկայ է ամէն ոտանաւորի մէջ եւ բանաստեղծը առանց իր սրտի բովնէն անցնելու եւ իր զգացումները զարդարելու, նիւթ մը չի ներկայացներ ընթերցողին:

Ինքն այդպէս շինուած է, արդարօրէն ըմբոստ պարտադրուած ուղղութեան մը: Բանաստեղծին մէջ մտքի ազատութեան տենչը անդիմադրելի է, բնածին է, կը յղանայ, կ'արտադրէ այնպէս՝ ինչպէս մայր մը ենթակայ է բնութեան մանչ կամ աղջիկ ծնանելու իր կամքէն անկախ:

Չեմ ուզեր ըսել թէ անդիտակից արտադրող մ'է, սակայն իր սիրտը աւելի ուժով է քան արտաքին աղբակները: Ամէն մարդ իր սիրած ծաղիկներով փունջեր կը կազմէ:

Թողէք, թողէք երգեմ
Ծաղիկները երգեմ
Երկրում կեանքն է ծաղիկել
Թողէք սէրը երգեմ
Թէ իմ սիրածն է չար
Թողէք սէրը երգեմ
Չեմ լացով էլ լըցուած
Չեմ աչքերը երգեմ...

Այս տողերը արդէն իր սրտին աղաղակներն են. աղաչանքն է առանց արտաքին կաշկանդումի, հրամանագիրներու, քրննադատներու բրածոյ սկզբունքներու, երգել սէրը. ծաղիկը եւ իր ներքին յոյգերը:

Երթալով Չարենցի եւ Իսահակեանի լուսաւոր ուղիքն, Յովհ. Շիրազ ինքն ալ պիտի սիրէ մեր ժողովուրդի քնարը. ահոր ցաւի եւ ուրախութեան կոչականները. անոր պարզ եւ անկեղծ հոգին. պիտի աշխատի այդ թանկագին հում նիւթը գեղազարդել, ճոխացնել եւ պատկերներու լեզուով բացատրել ընթերցողին: Այնպէս որ անուղղակի հաղորդ կ'ըլլանք ամբողջ

աղբի մը հոգեկան բովանդակութեան:

Հարազատ զաւակ է՝ այն որ իր ծնողքէն է ժառանգած հոգեկան եւ մարմնական մասնայատկութիւնները: Կոմիտաս վարդապետ մեծ պիտի չըլլար անջատուած հայ երգէն. Կրիկ միջազգային համալսարանի պիտի չըլլար եթէ նորվէկիական ժողովրդական երգերը չհագործած չըլլար. ոչ մէկ ուսու քերթող կամ երգահան այնքան համակրելի պիտի ըլլային եթէ թարգմանած չըլլային սլաւ ժողովուրդներու խորհրդապաշտ հոգին:

Անշուշտ ստորուկ հետեւողութիւն մը ժողովրդական երգերու մարդս բանաստեղծ չ'ընէր. պէտք է գիտնալ համեմել իր ստեղծագործութիւնը մեր երկրին բուրեան ծաղիկներով: Նոյն աղբակներէն ենթակայ է նաեւ երաժշտութիւնը, ըլլայ միանուազ կամ բազմանուազ. Արամ Պապաճանեան մը շատ աւելի յաջողութեամբ վերարտադրեցին հայ հոգին քան այն երգահանները, որոնք խաղերու տեղափոխութեամբ հայ երգեր չ'ինեցին:

Շիրազ զգոյշ քայլերով մտաւ հայ անդամատանին մէջ: Արդէն այն Շիրակը ուր ծներ է (Կիւմրի-Լենինական) ինքնին հարուստ է երգի եւ բանաստեղծութեան տուեալներով, հետեւաբար իր մէջ բնածին զգացում է, իր ծննդավայրի ճամբով երթալ:

Այ աղբիւր, օարի աղբիւր
Այ անոյշ, բարի աղբիւր -
Ախ, դու էլ լալով կ'երթաս
Իմ կորած եարի աղբիւր:

Շիրազ սիրահար է նաեւ պատկերներու եւ փոխաբերութիւններու. իր միտքը շատ անգամ նմանութիւններով կը պատկերացնէ, փոխանակ տրամաբանելու: Չափաւոր պատկերներ ըստ տեղին գեղեցիկ զարդեր են, սակայն անոնց խճողումը կը վնասէ քերթուածին մտքին եւ ամբողջականութեան:

Վերջերս հրատարակած իր Քնար Հայաստանի ստուար հատորը երբ ձեռքս առի, կարծեցի թէ տաղանդաւոր Շիրազը

նոր քերթուածներով կու գայ կրկին մեր գրականութիւնը ճոխացնելու: Տրտում յուսախարութիւն մը ամպի պէս վրաս իջաւ: Գրեթէ ոչ մէկ նորութիւն կար իր նախորդ հատորներէն. Լիբիկա եւ Քնար Հայաստանի նոյն բովանդակութիւնն ունին, բացի հեղինակին առջեւի նկարներէն, որոնցմէ մին գարնանային Շիրազն է, միւսը աշնանամուտի Շիրազը:

Ինչո՞ւ այս տարբեր անունով կրկին մկրտութիւնը. լաւագոյն չէ՞ր երկրորդ տպագրութիւն զնել: Ծերացած մարդիկ հին յուշերով կ'ապրին. Շիրազ ծերացած է եւ պէտք չունի ինքզինքը կրկնելու: Մեզի ծանօթ են իր մօր հանդէպ ունեցած պաշտամունքը: Մենք կարեկից սրտով կարդացեր ենք իր ընտանեկան յարկին քայքայումը, իր բալիկին հանդէպ հայրական գուրգուրանքը: Ընթերցողը վիշտերով համակուեր է կարգալով այն անկեղծօրէն զգայուն եւ ջերմ էջերը, ուր կը փնտռէ Արայիկին մայրը, եւ կին մը քարսիրտ ըլլալու է գեղադրելու համար բանաստեղծին կոչերուն:

Շիրազի լեզուն շատ պարզ է. համեստ եւ ժողովրդական. ճոխ բառեր, դասական ոճեր չունի. կարծես թէ ինքնարոյս մեծցած է, դպրոց է տեսած, կամ հիները է կարդացած: Լեզուական գեղեցկութիւններ շատ կան մեր հին գրականութեան մէջն ալ եւ զանոնք օգտագործելը չնորհք եւ գեղեցկութիւն պիտի տան իր գաղափարներուն: Պիտի արգիլեն որ եարբ, ջանք ամէն տեղ չ'մտնեն. որ էլիները կամ յանգեղները քերթուած մը ծայրէ ծայր չ'բռնեն հարիւր տէր ողորմեայի նման:

Շիրազի քով թերութիւնները չնչին են, իր տաղանդը ամէն քերթուածի մէջ կը փայլի: Իր Սիւմալիքոյ եւ Խաչեղարէ երկարաչունչ սիրային դիւցազներգութիւնը մեզ կ'ապահովցնէ թէ նման գեղարուեստական բարձրորակ նորութիւններ պիտի կարդանք մօտ ապագային:

(Շարունակելի)

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ